ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՀՀՀ-ՄԱԾՁԲ-25/1-Պ

ք. Երևան 07-ը հունվարի 2025թ.

«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ Պատվիրատու), ի դեմս գործադիր տնօրեն Հ. Մովսիսյանի, ով գործում է ընկերության Կանոնադրության հիման վրա, մի կողմից, և

«ՏԱՄՈ-ՇԻՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետ՝ Կատարող), ի դեմս տնօրեն Մ. Մելիքյանի, ով գործում է ընկերության Կանոնադրության հիման վրա, մյուս կողմից,

(այսուհետ յուրաքանչյուրն առանձին՝ Կողմ, միասին՝ Կողմեր),
կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Պայմանագրով Կատարողը Պատվիրատուի հանձնարարությամբ մատուցել Չինական մոդուլային տիպի ժամանակավոր բնակավայրի (հասցե՝ Նորք-Մարաշ վարչ. շրջան, Գարեգին Հովսեփյան 87/3) խմելու ջրի և կոյուղատարի կառուցման աշխատանքների նկատմամբ տեխնիկական հսկողության ծառայություններ (այսուհետ՝ Ծառայություններ), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել Ծառայությունները և վճարել դրանց դիմաց Պայմանագրով սահմանված կարգով, չափով և ժամկետում:

1.2. Կատարողը երաշխավորում է, որ Ծառայությունները մատուցվելու են «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի, «Շինարարության որակի տեխնիկական հսկողության իրականացման հրահանգ»-ի և ոլորտը կարգավորող իրավական ակտերի պահանջներին համապատասխան, ինչպես նաև Պայմանագրով սահմանված տեխնիկական բնութագրին համապատասխան, իսկ երրորդ անձանց մոտ բացակայելու են Կատարողի կազմած նախագծային փաստաթղթերի հիման վրա ծառայություններ մատուցելուն խոչընդոտող կամ դրանց կատարելը սահմանափակող իրավունքներ: Երրորդ անձանց մոտ նման պահանջների առկայության պարագայում Պատվիրատուն իրավասու է Կատարողին ներգրավել որպես պատասխանատու կողմ:

1.3. Ծառայությունները մատուցվում են Պայմանագրի կնքման օրվանից մինչև շինմոնտաժային աշխատանքների ավարտը:

1.4. Կողմերը երաշխավորում և հավաստում են, որ իրավասու են ստորագրելու Պայմանագիրը և ունեն Պայմանագիրը կատարելու համար բոլոր անհրաժեշտ իրավունքները, թույլտվությունները և համաձայնությունները:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. ***Պատվիրատուն իրավունք ունի՝***

2.1.1. Կատարողից պահանջել Պայմանագրով նախատեսված Ծառայությունները մատուցել Պայմանագրով սահմանված ժամկետում, ամբողջությամբ, պատշաճ որակով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի, «Շինարարության որակի տեխնիկական հսկողության իրականացման հրահանգ»-ի և ոլորտը կարգավորող իրավական ակտերի պահանջներին, ինչպես նաև Պայմանագրով սահմանված տեխնիկական բնութագրին համապատասխան,

2.1.2. Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայությունների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը՝ պահանջելով տրամադրել Ծառայությունների մատուցման ընթացքի և որակի վերաբերյալ Պատվիրատուին հետաքրքրող տեղեկատվությունը,

2.1.3. Պահանջել Կատարողից աջակցել Պատվիրատուին Ծառայությունների կատարման ընթացքը և որակը ստուգելիս, ինչպես նաև Ծառայություններն ընդունելիս,

2.1.4. Պայմանագրով իր ակնկալած արդյունքին հասնելու նպատակով Կատարողին տալ Ծառայությունների մատուցմանը վերաբերելի ողջամիտ ցուցումներ,

2.1.5. Գրավոր ծանուցմամբ միակողմանի լուծել Պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

i. Կատարողը ժամանակին չի սկսում Ծառայությունների մատուցումը կամ Ծառայությունները մատուցում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

ii. Ծառայությունների մատուցման ժամանակ ակնհայտ է դառնում, որ դրանք պատշաճ չեն մատուցվելու և առկա թերությունների վերացման համար Պատվիրատուի նշանակած ողջամիտ ժամկետում այդպիսի թերությունները Կատարողի կողմից չեն վերացվում,

iii. Կատարողը այլ կերպ թույլ է տալիս Պայմանագրի էական խախտում:

2.1.6. Ցանկացած ժամանակ միակողմանի լուծել Պայմանագիրը և պահանջել հանձնել անավարտ Ծառայությունների արդյունքը՝ այդ մասին 10 (տասը) աշխատանքային օր առաջ ծանուցելով Կատարողին, վճարելով մինչև Պայմանագիրը կատարելուց հրաժարվելու վերաբերյալ Պատվիրատուի համապատասխան ծանուցումը ստանալու պահը կատարած ծառայությանը համարժեք գումարը, ինչպես նաև հատուցելով Պայմանագրի դադարմամբ Կատարողին պատճառված վնասները՝ ամբողջ ծառայության համար սահմանված և մատուցված ծառայության համար վճարված մասի գների տարբերության չափով:

2.1.7. Պայմանագրի 5-րդ գլխով նախատեսված դեպքերում Կատարողից պահանջել ամբողջությամբ հատուցել Ծառայությունների մատուցման կապակցությամբ Պատվիրատուին պատճառված վնասը՝ ներառյալ բաց թողնված օգուտը:

2.2. ***Պատվիրատուն պարտավոր է՝***

2.2.1. Կատարողին ապահովել Պայմանագրով սահմանված Ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ բոլոր պայմաններով, այդ թվում, բայց չսահմանափակվելով, տրամադրել ելակետային տվյալներ այն տարածքների վերաբերյալ, որոնց կապակցությամբ մատուցվելու են Պայմանագրով նախատեսված Ծառայությունները, փաստաթղթեր, Կատարողի ներկայացուցիչներին Պատվիրատուի տարածք մուտք գործելու հնարավորություն և այլն,

2.2.2. Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կատարողի մասնակցությամբ զննել և ընդունել մատուցված Ծառայությունները (դրանց արդյունքը), իսկ Պայմանագրից Ծառայությունների արդյունքը վատթարացնող շեղումներ կամ Ծառայություններում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին Պայմանագրով սահմանված ժամկետում և կարգով հայտնել Կատարողին,

2.2.3. Ծառայությունների արդյունքն ընդունելու դեպքում Պայմանագրով սահմանված կարգով, չափով և ժամկետում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարը,

2.3. ***Կատարողը իրավունք ունի՝***

2.3.1. Պայմանագրով սահմանված Ծառայությունների մատուցման նպատակով Պատվիրատուից պահանջել ապահովել Պայմանագրի 2.2.1 կետով սահմանված պայմանները,

2.3.2. Պատվիրատուից պահանջել Պայմանագրով սահմանված կարգով և ժամկետում ընդունել պատշաճ մատուցված Ծառայությունները,

2.3.3. Պատվիրատուից պահանջել վճարել մատուցված Ծառայությունների դիմաց Պայմանագրով սահմանված կարգով, չափով և ժամկետում,

2.3.4. Այն դեպքում, երբ ծառայությունների մատուցումն անհնար է դարձել Պատվիրատուի գործողությունների կամ վրիպումների հետևանքով՝ փաստացի մատուցված ծառայությունների հաշվառմամբ ստանալ Պայմանագրի գնի համապատասխան մասը:

2.4. ***Կատարողը պարտավոր է՝***

2.4.1. Ծառայությունները մատուցել անձամբ, սեփական ուժերով և միջոցներով: Ծառայությունների մատուցմանը Կատարողի կողմից երրորդ անձանց ներգրավելը հնարավոր է միայն Պատվիրատուի նախնական գրավոր համաձայնության հիման վրա,

2.4.2. Պատասխանատվություն կրել Ծառայությունների մատուցման ժամկետների խախտման համար՝ վճարելով Պայմանագրի 5.3. կետով նախատեսված տույժը և հատուցելով կետանցով Պատվիրատուին պատճառված վնասները,

2.4.3. Աջակցել Պատվիրատուին Ծառայությունների մատուցման ընթացքը և որակը ստուգելիս, ինչպես նաև Ծառայություններն ընդունելիս, Պայմանագրի 2.1.2 կետով սահմանված կարգով Պատվիրատուի համապատասխան պահանջը ստանալուց 1 (մեկ) աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին տրամադրել Ծառայությունների մատուցման ընթացքի և որակի վերաբերյալ Պատվիրատուին հետաքրքրող տեղեկատվությունը,

2.4.4. Հետևել Պայմանագրի պայմանների սահմաններում Պատվիրատուի տված ողջամիտ ցուցումներին,

2.4.5. Ծառայություններ մատուցման ընթացքում թերություններ հայտնաբերվելու դեպքում տեղեկացնել դրանց մասին Պատվիրատուին,

2.4.6. Պայմանագրի 2.1.5. կետով նախատեսված հիմքերով Պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները,

2.4.7. Չտրամադրել Պայմանագրով մատուցված Ծառայությունների արդյունքը որևէ անձի՝ առանց Պատվիրատուի նախնական գրավոր համաձայնության,

2.4.8. Պայմանագրի կատարման ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1. Ծառայությունների մատուցման ավարտից հետո 10 (տաս) աշխատանքային օրվա ընթացքում Կատարողը Պատվիրատուին է ներկայացնում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման ակտը և հաշիվ-վավերագիրը:

3.2. Հանձնման-ընդունման ակտը ներկայացնելու օրվանից հետո 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուն Կատարողի աջակցությամբ ստուգում է մատուցված Ծառայությունների որակը:

3.3. Հանձնման-ընդունման ակտը Պայմանագրի 3.2. կետում նշված ժամկետում ստորագրվում է, եթե մատուցված Ծառայությունները համապատասխանում են Պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման ակտը չի ստորագրվում և

i. Կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով հայտնաբերված թերությունների վերացման համար անհրաժեշտ և Կատարողի կողմից անհատույց մատուցման ենթակա ծառայությունները և դրանց մատուցման ողջամիտ ժամկետները.

ii. Պատվիրատուն Կատարողի նկատմամբ կիրառում է Պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:

3.4. Եթե Պայմանագրի 3.2. կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված Ծառայությունների արդյունքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված Ծառայությունները համարվում են ընդունված և Պայմանագրի 3.2. կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող առաջին աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման ակտը:

3.5. Եթե Պատվիրատուն Ծառայություններն ընդունում է առանց Պայմանագրի 3.2. կետով սահմանված ժամկետում դրանց արդյունքների ստուգման, ապա զրկվում է ծառայությունի այն թերությունները վկայակոչելու իրավունքից, որոնք կարող էին հայտնաբերվել Ծառայությունների արդյունքը սովորական եղանակով ընդունելու ժամանակ (բացահայտ թերություններ):

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ և ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1. Պայմանագրով Կատարողի կողմից մատուցման ենթակա Ծառայությունների գինը կազմում է 144 000 (մեկ հարյուր քառասունչորս հազար) ՀՀ դրամ՝ ներառյալ բոլոր կիրառելի հարկերը:

4.2. Պատվիրատուն մատուցված Ծառայությունների դիմաց վճարում է համապատասխան հանձնման-ընդունման ակտի և հաշիվ-վավերագրի երկկողմանի հաստատվելուց հետո 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում:

4.3. Պայմանագրով վճարումն իրականացվում է անկանխիկ եղանակով՝ դրամական միջոցները Կատարողի բանկային հաշվեհամարին փոխանցելու միջոցով:

4.4. Վճարման ամսաթիվ է համարվում Պատվիրատուի բանկային հաշվից դրամական միջոցների ելքագրման ամսաթիվը:

4.5. Բանկային ծախսերը Պատվիրատուի բանկում մատուցում է Պատվիրատուն, իսկ Կատարողի բանկում՝ Կատարողը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1. Կողմերը պատասխանատվություն են կրում Պայմանագրով նախատեսված պարտավորությունները չմատուցելու կամ ոչ պատշաճ մատուցելու համար:

5.2. Կատարողը պատասխանատվություն է կրում շինարարական տեղամասում իր կողմից նշանակված տեխնիկական հսկիչի անհարգելի բացակայության, ինչպես նաև հետագայում տվյալ շինարարական տեղամասում հայտնաբերված թերությունների համար՝ յուրաքանչյուր դեպքում Պայմանագրի ընդհանուր արժեքի 20 (քսան) տոկոսի չափով:

5.3. Պայմանագրով նախատեսված Ծառայությունների մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից կետանցի յուրաքանչյուր օրվա համար գանձվում է տույժ՝ Պայմանագրի գնի 0,13 (զրո ամբողջ տասներեք հարյուրերորդական) տոկոսի չափով: Սույն կետով նախատեսված տույժը հաշվարկվում և հաշվանցվում է Կատարողին վճարման ենթակա գումարից:

5.4. Մատուցված Ծառայությունների դիմաց վճարելու Պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետը խախտելու դեպքում Պատվիրատուից կետանցի յուրաքանչյուր օրվա համար գանձվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,13 (զրո ամբողջ տասներեք հարյուրերորդական) տոկոսի չափով, բայց ոչ ավելին, քան վճարման ենթակա գումարի 5 (հինգ) տոկոսը:

5.5. Պայմանագրով սահմանված պատասխանատվության միջոցների կիրառումը Կողմերին չի ազատում Պայմանագրով ստանձնած պարտավորությունների ամբողջական մատուցումից, եթե այլ բան նախատեսված չէ ՀՀ օրենսդրությամբ:

5.6. Պայմանագրով չնախատեսված դեպքերում Կողմերն իրենց պարտավորությունները չմատուցելու կամ ոչ պատշաճ մատուցելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7. Տուժանքի վճարումը Կողմերին չի ազատում Պայմանագրով ստանձնած պարտավորությունների ամբողջական մատուցումից, եթե այլ բան նախատեսված չէ ՀՀ օրենսդրությամբ:

5.8. Պայմանագրով չնախատեսված դեպքերում Կողմերն իրենց պարտավորությունները չմատուցելու կամ ոչ պատշաճ մատուցելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

6.1. Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չմատուցելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են ջրհեղեղը, հրդեհը, երկրաշարժը, փոթորիկը, սողանքը, և բնական այլ աղետները, պայթյունը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքացիական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների ծառայությունի դադարեցումը, համաճարակները, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով պարտավորությունների մատուցումը:

6.2. Կողմը, որի մոտ ծագել է ֆորսմաժորային իրավիճակ, պետք է առաջին իսկ հնարավորության դեպքում, սակայն ոչ ուշ, քան նման իրավիճակի վրա հասնելուց 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում ծանուցի մյուս Կողմին նման իրավիճակի առաջացման, իսկ հետագայում նաև՝ բնականոն պայմանների վերականգնման մասին, հակառակ դեպքում կզրկվի ապագայում ֆորսմաժորային իրավիճակը որպես հիմնավորում օգտագործելու իրավունքից:

6.3. Ֆորսմաժորային իրավիճակի վերաբերյալ հանդիպակաց Կողմին ծանուցում ուղարկելու պահից Կողմի համապատասխան պայմանագրային պարտավորությունների կատարման պահանջը համարվում է կասեցված մինչև Պայմանագրի կատարման համար բնականոն պայմանների վերականգնումը:

6.4. Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 1 (մեկ) ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու Պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս Կողմին:

7. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

7.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում երկկողմանի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի՝ Պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով, պատշաճ և են «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի, «Շինարարության որակի տեխնիկական հսկողության իրականացման հրահանգ»-ի և ոլորտը կարգավորող իրավական ակտերի պահանջներին, ինչպես նաև Պայմանագրով սահմանված բնութագրին համապատասխան մատուցումը:

7.2. Պայմանագիրը ստորագրող Կողմերի ներկայացուցիչները սույնով հաստատում են, որ ունեն բոլոր անհրաժեշտ լիազորությունները ստորագրելու Պայմանագիրը և ներկայացնելու Կողմերին Պայմանագրով նախատեսված հարաբերություններում:

7.3. Կողմերից որևէ մեկն իրավունք չունի Պայմանագրով սահմանված իր իրավունքներն ու պարտավորությունները փոխանցել երրորդ անձի՝ առանց մյուս Կողմի գրավոր համաձայնության:

7.4. Պայմանագրից ծագած Կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած հակընդդեմ պարտավորության հաշվանցով՝ առանց Կողմերի նախնական գրավոր համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.5. Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում Կողմերի օգուտները (խնայողությունները) կամ կրած վնասները տվյալ Կողմի օգուտը կամ կրած վնասն են:

7.6. Պայմանագրի յուրաքանչյուր կետ կամ պայման իրենից ներկայացնում է առանձին և ինքնուրույն դրույթ: Եթե Պայմանագրի որևէ դրույթ դատական կարգով կամ այլ իրավասու մարմնի որոշմամբ ճանաչվի անվավեր կամ կատարման ոչ ենթակա, ապա Պայմանագրի մնացած բոլոր դրույթները կպահպանեն իրենց ուժը, բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերի:

7.7. Պայմանագրում ցանկացած փոփոխություն և լրացում վավեր է, եթե այն կատարված է գրավոր և ստորագրված է Կողմերի լիազոր ներկայացուցիչների կողմից:

7.8. Պայմանագիրը կարող է վաղաժամկետ լուծվել Պայմանագրով, ՀՀ օրենսդրությամբ նախատեսված կարգով և հիմքերով, ինչպես նաև Կողմերի փոխադարձ համաձայնությամբ: Պայմանագրի վաղաժամկետ լուծման հետևանքները կարգավորվում են Պայմանագրով, ՀՀ օրենսդրությամբ՝ կախված այդպիսի լուծման շարժառիթ հանդիսացած հանգամանքներից:

7.9. Պայմանագրի շրջանակներում Կողմերի միջև փաստաթղթերի, ծանուցումների առաքումը, տեղեկությունների փոխանակությունն իրականացվում է գրավոր կերպով՝ Պայմանագրի վավերապայմաններում նշված ծանուցման հասցեներով փոստային առաքմամբ կամ առձեռն հանձնելու միջոցով, կամ Կողմերի համաձայնությամբ նախատեսված այլ եղանակներով:

7.10. Պայմանագրի կատարման ընթացքում Կողմերից յուրաքանչյուրի անվանման, հասցեի, վճարման կամ այլ վավերապայմանների փոփոխության դեպքում, համապատասխան Կողմը պարտավոր է այդ մասին պատշաճ կերպով գրավոր ծանուցել մյուս Կողմին՝ այդպիսի փոփոխությունից 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում, հակառակ դեպքում՝ նախկինում տրամադրված վավերապայմաններով արված վճարումները, ուղարկված ծանուցումները համապատասխանաբար կհամարվեն ժամանակին կատարված կամ պատշաճ հասցեով ուղարկված:

7.11. Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.12. Պայմանագրի առարկային վերաբերող և Պայմանագրով ուղղակիորեն չկարգավորված բոլոր հարաբերությունները կարգավորվում են ՀՀ օրենսդրությամբ:

7.13. Պայմանագիրը կազմված է հայերեն, երկու հավասարազոր օրինակներից: Յուրաքանչյուր Կողմին տրվում է Պայմանագրի մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԻ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պատվիրատու	**Կատարող**
«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ	**«ՏԱՄՈ-ՇԻՆ» ՍՊԸ**
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Գ. Հովսեփյան 26	Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Արաբկիր 19 փ., 11ա
ՀՎՀՀ՝ 01540062	ՀՎՀՀ՝ 00096971
«Ինեկոբանկ» ՓԲԸ	«Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 2050022082671001	Հ/Հ՝ 2050922060071001
Հ. Մովսիսյան	**Մ. Մելիքյան**
Գործադիր տնօրեն	*Տնօրեն*